ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«13» 09 2022թ.
No 005345

«ՆԵՅՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՄԵՍՐՈՊ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ա. Ահարոնյան փ. 2/2, 3)

Հարգելի՛ պարոն Մինասյան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) կողմից 2022 թվականի օգոստոսի 9-ի թիվ 294–Ա որոշմամբ հարուցված թիվ ՀԳ-01864/22 վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովին հայտնել, թե ո՞վ է www.berber.am դոմենի գրանցման պատվիրատուն՝ նշելով նրա տվյալները և կցելով դոմենի գրանցմանն առնչվող բոլոր նյութերի պատճենները:

Տեղեկացնում ենք, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ

Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

4. Օրենքի 93-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

5. Հանձնաժողովին փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Կատարող՝ Նարինե Անանյան
Հեռ. (+374 60) 830-840 (243)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 17 հոկտեմբերի 2022 թվական: